ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ << Գրական ունկնդրում>> դասերն առաջին դասարանում

ԶԱՔԱՐՅԱՆ ԱՆՈՒՇ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ
2. Գլուխ 1 Գրական ունկնդրման հիմնական նպատակները առաջին դասարանում։
3. 1.2.Խաղ- ուսուցումն գրական ունկնդրման դասերին
4. Բեմականացումների դերը գրականունկնդրման դասերին
5. Հետազոտական մաս
6. Եզրակացություններ
7. Առաջարկություններ
8. Օգտագործված գրականության ցանկ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արդի տեխնոլոգիաների զարգացմանը զուգընթաց նվազել և նվազում է երեխաների հետաքրքրությունը ընթերցանության նկատմամբ: Ուսուցչի՝ մասնավորապես տարրական դասարանների ուսուցչի առջև մեծ խնդիր է դրվում երեխաների մեջ ձևավորել հետաքրքրություն ընթերցանության նկատմամբ: Տարրական դասարաններում ընթերցանությունը հիմք է համարվում հետագայում գրականության նկատմամբ հետաքրքրությունների զարգացման, բառապաշարի հարստացման, լայն աշխարհայացքի, արժեհամակարգի ձևավորման համար: Ուսուցման մեջ պետք է բարձրացնել աշակերտների ակտիվությունը, մասնավորապես դասերը աշակերտակենտրոն սկզբունքով վարելիս երեխաների ակտիվության և հետաքրքրության շրջանակը մեծանում է:

Հետազոտության նպատակը: Հետազոտության նպատակն է բացահայտել գրական ունկնդրում առարկայի դերը կրտսեր դպրոցականների ճանաչողական գիտելիքների հարստացման և ճանաչողական ունակությունների զարգացման գործում և առաջադրել ինքնուրույն ընթերցանության միջոցով ճանաչողական գիտելիքների համալրման նոր ու արդյունավետ մոտեցումներ:

Այս նպատակով մեր աշխատանքում առաջադրել ենք հետազոտության հետևյալ խնդիրները.

ա. քննել և ներկայացնել տարրական դասարաններում գրական ունկնդրում առարկայի կազմակերպման մեթոդներն ու եղանակները.

բ. հետազոտել գրական ուկնկդրում առարկայի դասընթացում ինքնուրույն ընթերցանության միջոցով ճանաչողական գիտելիքների հարստացման հնարավորություններն ու ձևերը:

Գլուխ 1

Գրական ունկնդրման հիմնական նպատակները առաջին դասարանում

Գրական տարբեր ժանրերի հետ երեխաների շփումը սկսվում է առաջին դասարանից՝ գրական ստեղծագործության ունկնդրելով, վերլուծելով, պատմելով,հարց ու պատասխանով, որտեղ սկզբնավորվում են նաև պատմական մշակութային դիրքորոշումները, բարոյական կրթության նպատակային խնդիրները և բովանդակությունը: ՈՒսուցչի խնդիրն է օգնել առաջին դասարանցի նորաթուխ մանուկին ,լսելով իր սիրելի հեքիաթները ,զարգանալ իր արժեքային համակարգի կողմնորոշումների հստակեցման ուղղությամբ:

Անհատի ձևավորումը կախված է ոչ միայն ընտանիքից այլև մանկավարժից, նրա պարզ, մաքուր մոռեցումից,նրա գիտակցական ջանքերից, որոնք նա կմշակի ու կդնի նոր սերնդի դաստիարակության և կրթության հիմքում:

Մեր արդի ժամանակաշրջանում ավաղ ,մի տեսակ հետ է մնացել շատ կարդալը և առօրյայում առաջ է եկել տեղեկատվական ժամանակակից միջոցները :Երեխաներն այսօր գերադասում 1 ժամ զբաղվել համակարգչային խաղերով , քան 30 րոպե ընթերցել որևէ գրական ստեղծադործություն: Այստեղ երեխային գրքի հետ մտերմացնելու, ընթերցել վարժեցնելու գործում շատ է օգնում առաջին դասարամում , սկսած նախաայբբենական շրջանից ,գրական ունկնդրման դասերը: Տեխնոլոգիական նվաճումների զուգընթաց՝ գիրքը կարող է դառնալ երեխայի լավագույն բարեկամն ու ընկերը և գիտելիքների զարմանահրաշ աշխարհ բացել նրա առջև:

Առաջին դասարանում գրական ունկնդրման հիմնական նպատակներն են.

- . խոսքի զարգացում
- . ակտիվ բառապաշարի հարստացում
- . արտասանական ունակության զարգացում
- . լսելու ունկնդրելու,մտապահելու,վերարտադրելուկարողությունների մշակում
- . հաղորդակցական կարողությունների ձևավորում

- միտք ձևակերպելու կարողությունների մշակուն,աշխարհաճանաչողական գիտելիքների ընդլայնում
- հերոսների զգայական վիճակը գնահատելու կարողության մշակում
- սեփական կարծիք հայտնելու ունակության ձևավորում
- մարդկանց,շրջապատող աշխարհի,բնության նկատմամբ հոգատար,ուշադիր վերաբերմունքի ձևավորում:
- Գրական ունկնդրման դասերին կառուցվածքային բազմազանությունը ուսուցչինհնարավորություն են իրականացնել իր առջև դրված նպատակները :
- Երեխայի բնավորության առանձնահատկությունները,ուսումնական գործունեության նկատմամբ նրա վերաբերմունքը՝ ջանասիրություն,երգեր կամ փոքրիկ բանաստեղծություններ սովորելու նրա ցանկությունն ու ունակությունը ,հաշվելու,կտրտելու,նկարելու,պարզ առաջադրանքներ կատարելու կարողություն:

Տարիքով երեխաները միատեսակ չեն աշխատում փոքրերի հետ,մի գործունեությունից հեշտությամբ անցնում են մյուսին ,ներքին ակտիվության որակները ավելի մեծ են, Այստեղ ուսուցչի դերը շատ մեծ է : ՈՒսուցման կազմակերպման հիմնական ձևով՝ դա-սով,մանկավարժը ապահովում է երեխաների համար գործուն ուսուցման պայմաններ որպեսզի կարողանա օգնել սովորողին՝դառնալ անհատականություն:

- . Կարևոր է հաշվի առնել սովորողի պահանջմունքների բնույթը,ինչպիս՞ի նախադրյալ-Ներ ունի, կարո՞ղ է պատմել տեսածի,լսածի մասին :
- . Երեխայի հետաքրքրությունների շրջանակը, ինչո՞վ է սիրում զբաղվել,ինչպե՞ս է անցկացնում ազատ ժամանակը,ին՞չ մուլտֆիլմ է սիրում դիտել,ին՞չ գրական ստողծագործություններ է սիրում լսել, ին՞չ բնույթի հարցեր է տալիս:

. Միջանձնայյին հարաբերությունները ,զգայու՞ն է մարդկանց նկատմամբ,ինչպե՞ս է իրեն պահում տարեկիցների, մեծերի հետ հաղորդվելիս, համագործակցու՞մ է նրանց հետ՞

. Գեղագիտական կարողություններն ու հետաքրքրությունները, ինչպե՞ս է վերաբերվում երաժշտությանը, նկարելու ,պատրաստելու ուղղությամբ ինչպիսի՞ նախադրյալներ ունի:

Դպրոցի շեմից նոր ներս մտած կրտսեր դպրոցականը ունի ներքին հնարավորություններ ,որի բացագայտման նախապայման է ուսուցչի ժամանակի ճիշտ պլանավորումը, դասին պատրաստվածությունը:Ոչ միայն դպրոցում ուսումնական իր գործընթացը կազմակերպելիս, այլև տարբեր միջավայրներում, տանը,հանգստի գնակիս և առհասարակ առօրյա կյանքում,ուսուցիչը իր ժամանակի մեջ կարող է գտնել ,իր համար հայտնաբերել զանազան հետաքրքրաշարժ պատմություններ,որոնք կարող են ծառայել գրական ունկնդրման ժամերին փոքրիկ ունկնդիրներին, ստեղծել հոգևոր հարստացման մթնոլորտ:

Քանի որ առաջին դասարանում ծանրաբեռնվածությունը ավելի շատ երեխաների մտածողության վրա է ,ուստի ուսուցումը դառնում է ստեղծագործական գործունեություն:Եթե գրական ունկնդրման ժամերին երեխաները հետաքրքրությամբ լսում են <<Երեք խոզուկների >> հեքիաթը ,ապա կարելի է ճիշտ ժամանակին երեխաների պատմել շրջիկ տիկնիկային թատրոնի ներկայացման մասին, որին ուսուցիչն էր ականատես եղել քաղաքում զբոսնելիս, պատմել ,որ իր տեսած ներկայացման մեջ հեքիաթը ունեցել է նաև ուրիշ ավարտ: Այնտեղ գայլը ընկնում է ոչ թե եռման ջրով լի կաթսայի մեջ,այլ նա բարի էր և նույնիսկ օգնում է երեք խոզուկներին կառուցել իրենց քարե տունը: Ցանկալի է ունենալ այդ ներկայացումից թեկուզ սմարտֆոն հեռախոսով նկարներ,տեսաձայնագրություններ, որոնք շատ մեծ հաճույքով և հետաքրքրությամբ նայում են երեխաները:Ապա առաջարկել երեխաներին ,որ իրենք էլ մտածեն այլ բարի ավարտներ երեք խոզուկներին ուտելու եկած գայլի համար: Երեխաների մեջ ձևավորվում է մեկը մյուսի նկատմամբ բարության, փոխօգնության, հոգատարության, փոխադարձ զիջումների , ազնիվ ճանապարհով նպատակին հասնելու բնավորության գծեր:

Հաջորդ գրական ունկնդրման դասին արդեն կարելի է կազմել առաջադրված շարունակություններ այն մասին, թե երեխաները ինչպիսի՞ վերջաբան կուզենային <<Կարմիր գլխարկի>> հեքիաթի հերոսների համար, ուսուցչի առաջարկություններից որի՞ հետ են համաձայն երեխաները:

Ուսուցիչ- Գայլը տատիկի տան ճանապարհին հանդիպում է վագրին և փախչում անտառի խորքը:

Աշակերտներ- Այո, լավ կլինի , տատիկն ու Կարմիր գլխարկը կփրկվեն:

Լավ կլիներ արջին էլ հանդիպեր և մի լավ<< ծեծ ուտեր>>,որ հաջորդ անգամ մարդկանց մոտ չգնար:

ՈՒսուցիչ- Տատիկը առողջացել էր և գնացել անտառ մորի հավաքելու, գայլը հեռացավ և շատ զղջաց , որ լսել էր Կարմիր գլխարկին:

Աշակերտներ – Կարմիր գլխարկը կարող էր խորամանկել և գայլին սխալ ճանապարհ ցույց տալ:

Գայլը հնարավոր է բարի լիներ, ինչպես <<Երեք խոզուկների>> հեքիաթի մեջ, նույնիսկ Կարմիր գլխարկին ուղեկցել տատիկի տուն:

Կարմիր գլխարկի մայրիկը թույլ չի տալիս ,որ իր աղջիկը մենակ գնա և ինքը գնում է աղջկա հետ:

Որսորդները ճանապարհին նկատելով գայլին `սպանում են նրան:

ՈՒսուցիչը ընթացքում ոգևորում է երեխաներին, նրանց առաջարկած տարբերակներն ու վերջաբանները վերլուծում երեխաների հետ, օգնում նրանց ուղղորդվելու դեպի բարությունն ու ազնվությունը,ոչ թէ չարությունը : Ավելի տպավորիչ կլինի նման գրական ունկնդրման դասերին կիրառել նաև էլեկտրոնային ռեսուրսներ, որոնք մեծ հաճույքով կատարում են երեխաները : Հարստանում է նրանց խոսքը,ինքնուրույն մտքեր ձևակերպելու ունակությունը:ՈՒսումնառության ընթացքում երեխաներին օժանդակողները ,բացի ուսուցչից ու ծնողներից նաև տատիկ – պապիկներն են:

Նրանք դպրոցի նախկին սաներն են,որոնց հետ ուսուցչի մշտական կապի, զրույցների , հանդիպումների շնորհիվ ստեղծվում են գրական ունկդրման համար յուրօրինակ դերային ներկայացումներ, բեմադրություններ:ՈՒսուցչի ստեղծագործական երևակայության և ճիշտ մոտեցման շնորհիվ ստեղծվում են տիկնիկային բեմականացումներ, հեքիաթների և առակների , նաև ժամանակակից մուլտֆիլմերի հերոսների կերպարներով ներկայացումներ:

Վեց տարեկանների ապրումները սկսում են <<իմաստ>>ստանալ՝ զայրացած երեխան հասկանում է ,որ ինքը զայրացած է , և դրա շնորհիվ սեփական անձի հանդեպ

առաջանում է նոր վերաբերմունք, ինչը բացակայել էր մինչև այդ: Այս տարիքը երեխայի սոցիալական <<Ես>>-ի առաջացման տարիքն է :Ինքնագիտակցության փոփոխությունը հանգեցնում է երեխայի արժեհամակարգի փոփոխության: Երեխան սկսում է իրեն անհատ զգալ:Այս ամենը հաշվի առնելով ուսուցիչը իր առօրյա կյանքում օգտագործում է իր ժամանակը սովորողների ընտանիքի անդամներին երեխաների դպրոցական կյանքին մասնակից դարձնելու համար:

Փոքրիկները մեծ հաճույքով են դիտում իրենց ավագ ընկերների ներկայացրած ներկայացումները,ուրախանում ,երբ իրենց հյուր են գալիս իրենց ծնողները, տատիկ – պապիկները կամ քաղաքային թատրոնի դերասաններից որևէ մեկը:Երեխաները զգում են ,որ իրենք շրջապատված են ուշադրությամբ ,հոգատարությամբ: Այս ամենը իհարկե կատարվում է ուսուցչի եռանդի և մտահղացումների շնորհիվ:

1.2.Խաղ- ուսուցումն գրական ունկնդրման դասերին

Առաջին դասարանում ուսումնական գործունեությունը ուղեկցվում է խաղերով: Երբ խաղը մտնում է մանկավարժական գործընթացի մեջ,դասարանում ստեղծվում է աշխույժ մթնոլորտ: Այդ կերպ ուսուցիչ-աշակերտ և աշակերտ-ուսուցիչ խոչնդոտներն աննկատելիորեն անհետանում են: Անընդհատ կրկնվող և միակերպ խաղերն ու խաղային հնարները նույնպես կարող են ձանձրացնել երեխային ,ուստի անհրաժեշտ է դրանք կիրառել ստեղծագործաբար: Խաղային պայմաններում աշակերտները հեշտությամբ են ներգրավվում ուսումնական գործունեության մեջ: Խաղն ուսուցման գործընթացում լուծում է և՛ կրթական,և՛ դաստիարակչական խնդիրներ: Սովորողները ձեռք են բերում միմյանց լսելու և համագործակցելու կարողություն: Այսպիսով նրանք գիտակցում են,որ մայրենի լեզվիիմացությունն անհրաժեշտ է ոչ միայն ծրագրային թեմաները յուրացնելու և բարձր գնահատական ստանալու, այլև կարդացածը և ունկնդրածը լիարժեք վերարտադրելու, պատշաճ ձևով միմյանց հետ զրուցելու,օգտակար խորհուրդներ ստանալու և փոխանցելու համար: Այս բոլոր պահանջներն իրականացվում են հիմնականում խաղ-ուսուցմաննպատակով:

Եթե պատմելիս երեխան չի լսում,չի կարողանում հստակ պատասխանել հարցերին ,դժվար է շփման եզրեր գտնու ընկերների հետ,դժվարությամբ է նստու ընթերցելու՝ այստեղ օգնության են գալիս տարբեր հետաքրքիր խաղային վարժությունները՝ 2-3 րոպե տևողությամբ : Առաջին դասարանում գրական ունկնդրումն կարող է կապող օղակ հանդիսանալ դասամիջոցի խաղային գործունեությունից ուսումնական գործունեության անցնելու համար: Գրական ունկնդրման դասերին ակտիվ մասնակցությունը նպաստում է երեխաների ուշադրության կենտրոնացմանը:

Խոսքային վարժությունները ընտրվում են խնամքով, նպատակային :Ցուցադրվում են նաև դիդակտիկ նյութեր՝ փոխկապակցված այն տեքստի բովանդակության հետ, որն ունկնդրելու են տվյալ գրական ունկնդրման դասին:

Այսպիսի աշխատանքի համար հարուստ նյութ են ծառայում ոչ միայն հանելուկները այլ նաև շուտասելուկները,որոնք երեխաները շատ են սիրում:Այս խոսքային խաղ- վարժությունը կարելի կազմակերպել մրցույթի ձևով՝ << Ո՞վ շուտ կգուշակի>> հարցադրումով: Նախապես ունենալ շուտասելուկների համապատասխան նկարներ ՝հերոսների կամ դրվագների, նաև պլաստիլինից, բնական նյութերից ,թղթից պատրաստված կերպարներ, որոնց միջոցով սովորողներըկկողմնորոշվեն ,թե ո՞ր շուտասելուկի մասին է խոսքը:

Շուտասելուկների շարան

ՈՒսուցիչ	Երեխաներ
Մկնիկի ,ձկնիկի նկարներ կամ պլաստիլինով ծեփված նույն հերոսները	<<Ձուկ ուտեմ, մուկ գցեմ, Մուկ ուտեմ, ձուկ գցեմ >>
Արարատ լեռան պատկերը	<< Սանասա՛ր, ասա՛ Սասնա սար: Արարա՛տ, ասա՛ Արարատ սար>>
Նուշի նկար կամ պատրաստված բնական նյութից	<<Անու՛շ, նու՛շ անուշ արա >>
Թղթից պատրաստված սարի և լուսնի նկարներ	<<Սարի ուսին՝ սիրուն լուսին, Սիրուն լուսին՝ սարի ուսին>>

ՈՒսուցիչը նախապես ունենալով իր կազմած աղյուսակը ,արդեն խաղ – առաջադրանքի կատարման վերջում տեսնում է ,թե որ շուտասելուկն էին ավելի արագ և սահուն հիշում երեխաները ,կատարում աղյուսակի վրա նշումներ: Պետք է ասել,որ հիմնականում ուսուցչից է կախված ,թե ինչպես կընթանա խաղ-առաջադրանքը,ինչպես կարձագանքեն երեխաները շուտասելուկներըարտասանելիս:

Յուրաքանչյուր գրական ունկնդրման դասին երեխաները ծանոթանում են նոր ստեղծագործության,և ամբողջ աշխատանքը անցկացվում է միայն երեխաների սկզբնական ընկալումից հետո:Հիմնական դժվարությունն այն է ,որ տարբեր երեխաներ ունեն ընկալելու տարբեր եղանակներ,ոճեր: Տեսողական ընկալումով և հիշողությամբ սովորողները երկար լսելիս ձանձրանում են:

Իսկ այն երեխաները,որոնց ինքնագնահատականը ցածր է,սկսում են տագնապել,որ երբեք չեն կարող կարդալ այնպես,ինընթերցում է իրենց ուսուցիչը:

ՈՒսումնական գործընթացում խաղերը հաղորդակցության՝ երկխոսության կարողությունների ձևավորման և զարգացման կարևոր գործոններից են: Հատկապես դերային խաղերը ,որոնք նպաստում են սովորողների ուսումնառության դրդապատճառների,ինչպես նաև ուսումնասիրվող լեզվի նկատմամբ հետաքրքրության առաջացմանը:Գրական ունկնդրկան դասերին խաղզային դադարները բնութագրում են սովորողների անմիջական վարքը և վերաբերմունքը այլ մարդկանց նկատմամբ, սովորողը տրված իրադրությունում կարողանում է ազատ խոսել, արագ կողմնորոշվել առաջադրանքները կատարելիս:Խաղային առաջադրանքների միջոցով զարգանում է երեխաների մտավոր գործունեությունը, ճանաչողական և անկաշկանդ վարքի դրսևորումները:

Այնպիսի խաղեր, ինչպիսիք են օրինակ՝ <<Թափթփված բառեր >> ,<<Հավաքիր ճամպրուկդ >> օգնում են երեխաներին հիշողությամբ պատմել հեքիաթները, պահպանել հեքիաթի դեպքերի հաջորդականությունը: Հովհաննես Թումանյանի
<<Պոչատ աղվեսը >> հեքիաթը կարելի է պատմել կիրառելով <<Թափթփված բառեր >>խաղը, երբ հեքիաթի դեպքերի հաջորդականությանը վերաբերվող բառերը խառը թափվում են սեղաններին, կամ հերոսների անուններն են խառնված լինում, երեխաները խմբերով մրցելով դասավորում են բառերը ՝ հիշողությամբ պատմելով հեքիաթը: Իսկ <<Հավաքիր ճամպրուկդ >>խաղի դեպքում, բառերի փոխարեն հեքիաթի հերոսների կամ իրերի նկարներ են լինում ,որոնք նորից պետք է ընտրեն երեխաները ՝ըստ ունկնդրած գրական ստեղծագործության:

Խաղ ուսուցման միջոցով զարգանում է սովորողների համագործակցային կարողությունները,գրական ունկնդրման դասերին երեխաները արտահայտում են տարբեր զգացմունքներ՝ ուրախություն, զարմանք, տխրություն,հիացմունք:

Բեմականացումների դերը գրական ունկնդրման դասերին

Առաջին դասարանում գրական ունկնդրման դասերի ընթացքում լուրջ ուշադրություն պետք է դարձնել երեխաների տարիքային առանձնահատկություններին, պատասխանելով մի կարևոր հարցի՝ << Ինչ է սիրում 6տարեկան առաջին դասարանցին >>: Վեց տարեկան առաջին դասարանցին սիրում է նկարել,ներկել,խաղալ ,տեսածն ու լսածն բեմադրել: ՈՒսուցչի օգնությամբ երեխան կարողանում է քննարկել ունկնդրածը,խորհրդածել այդ ուղղությամբ , որոշել գործողությունների հաջորդականությունը:Այստեղ օգնության են գալիս բեմականացումները ,որոնցով աշխատելիս փոքրիկները երբեք չեն ձանձրանում,իսկ եթե համեմվում են երգ-երաժշտությամբ ավելի գրավիչ են դառնում երեխաների համար:

<<Պապն ու շաղգամը >> բեմադրելիս ընդգրկվող երեխաները հենց իրենք են սիրով ընտրում իրենց դերերը: ՈՒղղորդվելով երաժշտական դադարներով, երեխաները հեքիաթը պատմելով և միաժամանակ արագ կողմնորոշվելով ,մեկը մյուսին կանչելով, փորձում են<< քաշելով – քաշքշելով շաղգամը հողից հանել>>:

Մեծ զվարճանքով, ամեն անգամ բեմադրելիս, հմտանում է երեխաների իրար հետ համագործակցելու, օգնելու, համախմբվելու, միասին ավելի ուժեղ լինելու կարողությունը:

Աթաբեկ Խնկոյանի <<Ճպուռն ու մրջյունը >> ունկնդրելիս երեխաները պարզաբանում են ճպուռի ծուլությունը և մրջյունի աշխատասիրությունը,քննարկում բնության երևույթները,տարվա եղանակները, հաճույքով մասնակցում հեքիաթի բեմադրությանը, հորինում այլ վերնագրեր ՝ արդյունքում անգիր սովորում առակը,ամրապնդվում է միջատների մասին նախնական գիտելիքները:

Սովորողների մեջ ցանկություն է արթնանում հաղթահարելու իր առջև ծագած դժվարությունները, մղվում դեպի ինքնահաստատման:Իրենց իսկ ձեռքով պատրաստված հեքիաթի հերոսներով տիկնիկային ներկայացումները զարգացնում են երեխաների կամային հատկանիշները,հուզական դրական էմոցիաները: Այստեղ ակտիվ մասնակցություն է ունենում երեխաների հիշողությամբ պատմելը,երբ ուսուցչի ընթերցած տողերից գուշակում են հեքիաթի կամ առակի վերնագիրը,ապա դերերով կատարում են հատվածներ.

Ուսուցիչ	Երեխաներ
<<Դե քեֆ արա ,օխայ˜- օխա˜յ… >>	<< Պույ-պույ մկնիկը>>
<<Էս սարն իմ՛ն է…>>	<< Չարի վերջը >>
<<Ցուրտը տարա՞վ , վա՛հ տնաշեն….>>	<< Շունն ու կատուն >>

Մշակվում է երեխաների բառապաշարը և խասքային հաղորդակցությունը:Նման իրավիճակներում զարգանում է երեխաների `պարզ իրադրություններում կարճ 2-3 նախադասությամբ տեղեկատվություն ստանալու և հաղորդելու, զրույցին մասնակցելու կարողությունը: ՈՒՆկնդրած գրական ստեղծագործությունների իր դերի տողերի ակամայից անգիր անելը և այնուհետև արտասանելը մեծ ոգևորություն է առաջացնում՝ մանավանդ ,երբ հնարավորություն է տրվում ինքնուրույն ընտրել դերերը:

Առաջին դասարանում գրական ունկնդրման դասերին տարբեր բեմականացումները, տիկնիկային ներկայացումները խթանում են նաև արտահայտիչ ընթերցանությանը, քանի որայն բանավոր խոսքի արվեստ է և հենց դրանով է պայմանավորված դրա կապը ճարտասանության կամ հռետորական արվեստի հետ: Խոսքի բովանդակության լիարժեք ընկալումը պայմանավորված է նաև այն հանգամանքով, թե ինչպես է հաղորդվում ասելիքը: Խոսելու,զրուցելու, պատմելու, հարց ու պատասխանի միջոցով սովորողների ակտիվ բառապաշարի մեջ են ներմուծվումուղղախոսական բազմաթիվ բառեր:

Առոգանությամբ արտասանելիս կամ իր բեմական խոսքը արտահայտելիս լեզվական միավորները ,բառերի կամ կապակցությունների հնչերանգային հատկանիշները կատարելագործվում են:Կետադրական նշաններով, առոգանությամբ ճիշտ արտահայտվելը ապահովում է գրական ստեղծագործության արտահայտիչ ընթերցանությունը, գրական կերպարների,էության ճիշտ ընկալումը: Հովհաննես Թումանյանի <<Ճամփորդները>> հեքիաթը բեմադրելիս սովորողների գիտակցության մեջ ամրապնդվում է ,թե որքան կարևորէ հավատարմությունն ու ընկերասիրությունը մարդու կյանքում:Երեխաները դատապարտումեն խարդախությունը , անարդարությունը, աղվեսի խորամանկ պահվածքն ու անկշտությունը,ագահությունը, բայց շան համարձակությունը, ուժեղ լինելը, աքաղաղի աղվեսին ծաղրելը.<< - Կա՛ց,աղվե՛ս, մի՛ շտապիր, մենք էլ ենք

գալիս,այդպես ընկեր չի լինի,- ծառի վրայից ծիծաղելով ձայն տվեց աքաղաղը>>:

Առաջին դասարանում գրական ունկնդրման դասերի բեմադրուդյունների շնորհիվ զարգանում է փոքրիկների ուշադրությունը կենտրոնացնելու, ընթերցվաղ տեքստի բովանդակությունը վերարտադրելու կարողությունները, հարստացնում բառապաշարը, ճանաչողական և լեզվական գիտելիքները, ձևավորում արժեքային համակարգ:Գրական ունկնդրման դասերին շատ կարևոր է դերերով արտասանելի երեխաների ուշադրությունը անընդհատ հրավիրել հարցական,բացականչական,հրամայական ,պատմողական նախադասությունների ելևէջների վրա և նրան սովորեցնել՝ գործնականորեն տարբերել դրանց արտասանության ,իսկ հետագայում ընթերցման առանձնահատկությունները: Օրինակ ՝նախադասությունները արտաբերելիս ճիշտ շնչել, ճիշտ շունչ առնել, մտքում կրկնել, արտասանել շշուկով ՝ցածրաձայն,դանդաղ,բարձրաձայն ՝արագ:Այսպիսի աշխատանքների ժամանակ չանտեսել հուզական ճիշտ ընկալումը:

ԳԼՈՒԽ 2. ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԳՐԱՃԱՆԱՉՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Հարցախույզի նպատակն էր պարզել մայրենիի դասերի, մասնավորապես գրաճանաչության ընթացքում կրտսեր դպրոցականի՝ ընթերցանության նկատմամբ հետաքրքրությանձևավորմանը նպաստող միջոցներն ու առաջացած դժվարությունները:

Դիտարկենք հարցման արդյունքները:



«Ի՞նչ եք կարծում, ընթերցանության նկատմամբ երեխայի հետաքրքրությունը հիմնականում գրաճանաչության ո՞ր փուլում է ձևավորվում» հարցին մասնակից ուսուցիչներից 4 –ը (40%) պատասխանել են, որ ընթերցանության նկատմամբ հետաքրքրություն ձևավորվում է գրաճանաչության շրջանի բոլոր փուլերում, 3-ը (30%) նշել են հետայբբենական, 2-ը (20%)՝ այբբենական և 1-ը (10%) ՝ նախաայբբենական շրջանում: Այլ պատասխան ոչ ոք չի ընտրել: Պարզվեց, որ հարցախույզին մասնակից ուսուցիչների մեծամասնության կարծիքով 1-ին դասարանցիների հետաքրքրությունը ընթերցանության նկատմամբ ձևավորվում է գրաճանաչության բոլոր փուլերում: Այսպիսով, մենք նույնպես կարծում ենք, որ ընթերցանության նկատմամբ հետաքրքրությունը ձևավորվում է գրաճանաչության բոլոր փուլերում:

«Ի՞նչ եք կարծում, ընթերցանության նկատմամբ երեխայի հետաքրքրությունը հիմնականում գրաճանաչության ո՞ր փուլում է ձևավորվում» հարցին մասնակից ուսուցիչներից 4 –ը (40%) պատասխանել են, որ ընթերցանության նկատմամբ

հետաքրքրություն ձևավորվում է գրաճանաչության շրջանի բոլոր փուլերում, 3-ը (30%) նշել են հետայբբենական, 2-ը (20%)՝ այբբենական և 1-ը (10%) ՝ նախաայբբենական շրջանում: Այլ պատասխան ոչ ոք չի ընտրել: Պարզվեց, որ հարցախույզին մասնակից ուսուցիչների մեծամասնության կարծիքով 1-ին դասարանցիների հետաքրքրությունը ընթերցանության նկատմամբ ձևավորվում է գրաճանաչության բոլոր փուլերում: Այսպիսով, մենք նույնպես կարծում ենք, որ ընթերցանության նկատմամբ հետաքրքրությունը ձևավորվում է գրաճանաչության բոլոր փուլերում:



«Մայրենիի դասընթացի ո՞ր բաղադրիչն է ավելի արդյունավետ ընթերցանության նկատմամբ հետաքրքրություն ձևավորելու տեսանկյունից» հարցին դասվարներից 2-ը (20%) նշեցին «Գրական ունկնդրում և խոսք» բաղադրիչը, 3-ը (30%)՝ «Խոսք և հաղորդակցություն» և 5-ը (50%) նշեցին, որ երկուսն էլ շատ կարևոր և արդյունավետ են: Այլ պատասխան ընտրող դասվար չկար: Այսպիսով, ինչպես ուսուցիչները, այնպես էլ մենք կարծում ենք մայրենիի բաղադրիչներն արդյունավետ և կարևոր են ընթերցանության նկատմամբ հետաքրքրություն ձևավորելու տեսանկյունից:



«Գրաճանաչության շրջանում կազմակերպում ե՞ք արտադասարանական ընթերցանություն: Ինչպե՞ս:» հարցին մասնակից դասվարներից 2-ը (20%) նշեցին, որ չեն կազմակերպում արտադասարանական ընթերցանություն , 8-ը(80%) պատասխանել են՝ այո: Կազմակերպում և դա համարում ենք պարտադիր բաղադրիչ ընթերցանության նկատմամբ հետաքրքրություն ձևավորելու տեսանկյունից: Ինչպե՞ս հարցին ուսուցիչների տված պատասխանները նման էին իրար, բայց տարբերակվում էին կատարման եղանակներով. մի մասը նախընտրում է ուսուցչի ընթերցանությամբ, բայց աշակերտների հետ քննարկման տարբերակը, իսկ մյուս մասը առաջնահերթությունը տալիս է աշակերտների թե՛ ընթերցանությանը, թե՛ վերլուծությանը (հետայբբենական շրջան): Այսպիսով, մենք նույպես կարծում ենք, արտադասարանական ընթերցանությունը կարևոր դեր ունի ընթերցանության նկատմամբ հետաքրքրություն առաջացնելու գործընթացում:

Տրամագիր 5.



«Ի՞նչ միջոցներով եք խթանում աշակերտի հետաքրքրությունը ընթերցանության նկատմամբ գրաճանաչության շրջանում» հարցին դասվարներից 4-ը (40%) նշել են խաղեր , 1-ը (10%)՝ առաջադրանքներ, 2 –ը (20%)՝ դիդակտիկ պարագաներ, 1-ը (10%)՝ դաս-էքսկուրսիաները և 2-ը (20%)՝ այլ տարբերակ՝ նշելով, որ կարևոր միջոցներ են համարում և՛ խաղերը, և՛ առաջադրանքները: Մեր վարած դասերի, դասալսումների արդյունքում մենք նույպես հանգեցինք այն եզրակացության, որ խաղերի և առաջադրանքների միջոցով կարելի է ընթերցանության նկատմամբ հետաքրքրություն ձևավորել՝ հաշվի առնելով երեխաների տարիքային առանձնահատկությունները:

Տրամագիր 6



«Ինչպե՞ս եք անցկացնում գրական ունկնդրման դասը ընթերցանության նկատմամբ հետաքրքրություն ձևավորելու նպատակով» հարցին մասնակից ուսուցիչներից 1-ը (10%) նշել է հեքիաթի, առակի, հանելուկի, շուտասելուկի, մանկական բանաստեղծությունների ընթերցումը, 2-ը(20%)՝ հեքիաթի պատկերազարդ նկարների դիտումը, 3-ը (30%)՝ դերերով բեմականացումը, 1-ը (10%) խմբային աշխատանքները, բաց դաս՝ հեքիաթի բեմականացումը ոչ ոք չի նշել, 3-ը (30%) նշել են այլ պատասխան՝ հավելելով, որ կիրառում են վերը նշված բոլոր տարբերակները՝ կապված որոշակի պայմանների հետ:

Տրամագիր 7



«Բացատրական ընթերցանության ո՞ր բաղադրամասի կիրառումն է գերակշռում Ձեր դասերի ընթացում և որքանո՞վ է այն արդյունավետ ընթերցանության նկատմամբ աշակերտների հետաքրքրությունը ձևավորելու նպատակով: Հիմնավոր՛ք:» հարցին պատասխան տարբերակներից դասվարներից 5-ը (50%) նշել են զրույցը, 3-ը (30%)՝ աշխատանքը բնագրի շուրջ, 1-ը (10%)՝ բնագրի ընթերցումը, 1-ը (10%)՝ բառային աշխատանքը, պատմումը և ամփոփումը ոչ մի դասվար չի նշել: Հարցմանը մասնակից ուսուցիչների մեծամասնությունը նշել է, որ իր դասերի ընթացքում գերակշռում է բացատրական ընթերցանության բաղադրամասերից զրույցը: Մենք կարծում ենք, որ ընթերցանության նկատմամբ հետաքրքրություն կառաջանա, եթե առաջին անգամ դասանյութի շուրջ աշխատեն աշակերտները:

Իհարկե, ուսուցիչը նախապես պետք է կազմի այնպիսի առաջադրանքներ և հարցեր, որոնք կօգնեն աշակերտներին հետաքրքրվել տրված նյութերով, և կփորձեն ինքնուրույն կարդալ դրանք։

Հարցախույզի վերջին՝ «Նշե՛ք այն դժվարությունները, որոնք առաջացել/ առաջանում են ընթերցանության նկատմամբ հետաքրքրության ձևավորման ընթացքում (ինչպես Ձեր, այնպես էլ աշակերտների դժվարությունները) հարցը բաց է. խմբավորելով ուսուցիչների պատասխանները՝ ներկայացնենք դրանք.

- կարդալու որակական հատկանիշների բացակայություն
- ընթերցածի ոչ ճիշտ, լիարժեք և արագ ընկալում
- մեծածավալ տեքստի ընտրությունը, դժվար արտասանվող բառերի ներառվածությունը տեքստերում
- երեխաների տարիքային առանձնահատկություններին չհամապատասխանող թեմաների ընդգրկվածություն
- դպրոցների՝ ՏՀՏ-ներով ապահովվածության բացակայություն կամ ոչ բավարար ապահովվածություն:

Ուսումնասիրելով ուսուցիչների կարծիքները գաճանաչության շրջանում ընթերցանության նկատմաբ հետաքրքրություն ձևավորելու տեսանկյունից, եկանք այն համոզման, որ հարցախույզին մասնակից ուսուցիչների մեծամասնությունը կարևորում է ընթերցանության նկատմամբ հետաքրքրություն առաջացնող աշխատանքները, սակայն ոչ բոլոր ուսուցիչներն են քայլեր ձեռնարկում այդ ուղղությամբ: Մեր կարծիքով, երկարատև և հետևողական աշխատանքները կնպաստեն աշակերտների՝ ոչ միայն հասկանալով կարդալու կարողության, այլև ընթերցանության նկատմամբ հետաքրքրության ձևավորմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսումնասիրելով մեր հետազոտական աշխատանքի հիմնախնդրի վերաբերյալ առկա մասնագիտական գրականությունը, մեթոդական ձեռնարկները և ծրագրերը՝ հանգեցինք հետևյալ եզրակացություններին.

1. Թե՛ մասնագիտական գրականությունը, թե՛ մեթոդական ձեռնարկները և ծրագրերը միտված են մեկ նպատակի՝ սահուն և արտահայտիչ ընթերցանություն զարգացնելու կարողությանը: Դրանք հարուստ են և անընդհատ արդիականացող, քայլում են ժամանակի պահանջներին համընթաց՝ անընդհատ նորանալով ու փոփոխվելով:
2. Տարրական դպրոցում գործող մայրենիի այլընտրանքային դասագրքերում տեղ են գտել այնպիսի թեմաներ ու բնագրեր, որոնք ինչ-որ չափով կորցրել են իրենց արդիականությունը ու չեն բավարարում ներկայիս սովորողի հետաքրքրության շրջանակներին: Կարծում ենք՝ հնարավոր է դրանք փոխարինել նոր բնագրերով, որոնք գրաճանաչության ընթացքում կձևավորեն հետաքրքրություն ընթերցանության նկատմաբ:
3. Ընթերցանության ժամերին դիտարկումներ կատարելով և եղած փորձը ուսումնասիրելով՝ եկանք այն եզրահանգմանը, որ սահուն ընթերցանությունը զարգացնում և ձևավորում է հարուստ բառապաշար, կապակցված խոսք կառուցելու, դատողություններ անելու կարողություններ:

4. Նույն բնագրի շուրջ տարաբնույթ աշխատանքներ կատարելով՝ աշակերտը ձեռք է բերում ոչ միայն լավ և հասկանալով կարդալու կարողություն, այլև չի մարում նրա կարդալու ցանկությունը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ուսումնասիրելով տարրական դպրոցում գործող մայրենիի այլընտրանքային դասագրքերը՝ եկանք այն կարծիքին, որ դրանցում կան այնպիսի թեմաներ ու բնագրեր, որոնք ինչ-որ չափով կորցրել են իրենց արդիականությունը ու չեն բավարարում ներկայիս սովորողի հետաքրքրության շրջանակներին: Կարծում ենք՝ հնարավոր է դրանք փոխարինել նոր բնագրերով, որոնք կհետաքրքրեն դպրոցականներին՝ խթանելով նրանց ընթերցասիրությունը և դաստիարակելով բարոյական բարձր արժեքներ:
2. Դպրոցներն ունենան «Ընթերցասերի խմբակ», որտեղ կկազմակերպվեն տարաբնույթ աշխատանքներ, և ընթերցասեր աշակերտները կխրախուսվեն:
3. Ծնողական ժողովների ժամանակ ծնողներին ուղղորդել, որ կազմակերպեն «Ընտանեկան ընթերցանության օր»՝ երեխայի ցանկությամբ որևէ հետաքրքիր նյութ ընտրելով և ընթերցելով

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գյուլամիրյան Ջ., Հ., Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Ե., 2018, Զանգակ, 314 էջ:
2. Գյուլամիրյան Ջ., Հ., «Զանգակ» այբբենարանի և «Ես սովորում եմ գրել» աշխատանքային տետրերի մեթոդական ուղեցույց, Ե., 2003, Զանգակ, 180 էջ:
3. Գյուլամիրյան Ջ., Հ., «Խաղալով սովորենք», Ե., 2009, Զանգակ, 79 էջ:
4. Տեր-Գրիգորյան Ա., Ընթերցանության մեթոդիկա, Ե., 1978, Լույս, 245 էջ:
5. Խաչատրյան Պ., Հայոց լեզվի տարրական դասընթացի ուսուցման մեթոդիկա, Ե., 2004, Զանգակ, 182 էջ:
6. Մանուկյան Ս. Պ., Մանկավարժական և աշակետական դասանպատակները, Ե., Լուսաբաց, 2003, էջ 151-152:
7. Огородников И. Т., Педагогика, Просвещение, М., 1968, с 235.
8. Սարգսյան Վ., Այբբենարան, Ե., 2019, Մանմար, 155 էջ:
9. Սարգսյան Վ., Այբբենարան- մեթոդական ձեռնարկ, Ե.,2006, Մակմիլան-Արմենիա, 196 էջ:
10. Սարգսյան Վ., Մայրենի 1, Ե., Մակմիլան-Արմենիա, 2009, 64 էջ:
11. Սարգսյան Վ., Մայրենի 1, ուսուցչի ձեռնարկ, Ե., Մակմիլան-Արմենիա, 2009, 64 էջ:
12. Քուրքչյան Ա., Տեր-Գրիգորյան Լ., Այբբենարան, Ե., 2019, Էդիթ Պրինտ, 123 էջ:
13. Քուրքչյան Ա., Տեր-Գրիգորյան Լ., Այբբենարան, ուսուցչի ձեռնարկ, Ե., 2015թ, Էդիթ Պրինտ, 64 էջ:

14. Քուրքչյան Ա., Տեր-Գրիգորյան Լ., Մայրենի 1, ուսուցչի ձեռնարկ, Ե., Էդիթ Պրինտ, 2007, 64 էջ:
15. Քուրքչյան Ա., Տեր-Գրիգորյան Լ., Մայրենի 1, Ե., Էդիթ Պրինտ, 2019, 64 էջ:
16. Սարգսյան Վ., Գրիգորյան Ս., Թորոսյան Կ., Խաչատրյան Հ., Մայրենի 2, Ե., 2017, Մանմար, 159 էջ:
17. Քուրքչյան Ա., Տեր-Գրիգորյան Լ., Մայրենի 2, մաս 1, Ե., 2019, Էդիթ Պրինտ, 87 էջ:
18. Քուրքչյան Ա., Տեր-Գրիգորյան Լ., Մայրենի 2, մաս 2, Ե., 2019, Էդիթ Պրինտ, 168 էջ:
19. Թորոսյան Կ., Սարգսյան Վ., Խաչատրյան Հ., Չիբուխչյան Կ., Մայրենի 3, Ե., Մանմար, 2016, 175 էջ:
20. Սարգսյան Վ., Թորոսյան Կ., Խաչատրյան Հ., Ջիլավյան Ե., Մայրենի 4, Ե., Մանամար, 2017, 159 էջ:
21. Գալստյան Ա., Խարազյան Ռ., Ավագյան Լ., Բալայան Ա., Գրական ունկնդրում և խոսք, 1-ին դասարան (ինտերակտիվ ձեռնարկ),Ե., Զանգակ, 2013, 84 էջ:
22. Թերեզյան Գ., Թորոսյան Կ., Խաչատրյան Հ., Խոսք և հաղորդակցություն, 1-ին դասարան, Ե., Զանգակ, 2013, 31 էջ:
23. Սարգսյան Վ., Մեծ գիրք փոքրերի համար, գրական ունկնդրման նյութեր, Ե., Մանմար, 2016, 384 էջ:
24. https://forum.armedu.am/(02.15.2020թ.)
25. https://blog.armparents.com/(02.15.2020թ.)

Դասի պլան

Դասարան՝ I

Առարկան՝ Մայրենի-գրական ունկնդրում

Դասի լայն թեման՝ հեքիաթների աշխարհում

Դասի նեղ թեման՝ Պոչատ աղվեսը

Դաի տեսակը՝ նոր նյութի հաղորդում

Դասի նպատակները՝

- Ընթերցանության նկատմամբ հետաքրքրության ձևավորում
- Կապակցված խոսքի ձևավորում և զարգացում
- Աշակերտների մոտ հետաքրքրության աճի պահպանում
- Տեղեկատվության ինքնաընկալման ապահովում
- Երևակայության, ուշադրության, հիշողության զարգացում

Դասի կահավորումը՝ հեքիաթի հատվածներից նկարներ, Հ. Թումանյանի մեծադիր նկարը, աղվեսի մասին հանելուկ, փոքրիկ տնակ, կախարդական տուփ:

Օգտագործված մեթոդներ՝ «Ուղղորդված ընթերցանություն՝ կանգառներով», «Կանխագուշակումների աղյուսակ»:

Դասի ընթացքը-խթանման փուլ

Աշակերտներից մեկը բացում է կախարդական տուփը, հանում հանելուկը: Հանելուկը ընթերցում է ուսուցիչը:

Հանելուկ- ունի երկար պոչ գեղեցիկ է նա, բայց հավանոցից հեռու չի գնա, ու թե իմանան կփախչի իսկույն, հավին խեղդամահ կհասցնի իր բույն:

Նախապես կազմված հարցերի միջոցով կազմակերպել փոքրիկ զրույց, որի միջոցով պետք է ամբողջացնել Հ. Թումանյանի և նրա գրած հեքիաթների մասին երեխաների ունեցած գիտելիքները:

Հարցեր՝

- Ի՞նչ հեքիաթ գիտեք աղվեսի մասին:
- Իսկ դուք գիտեք ո՞վ է գրել «Պոչատ աղվեսը» հեքիաթը:
- Ո՞վ է Հ. Թումանյանը:
- Հ. Թումանյանի գրած ուրիշ ի՞նչ հեքիաթներ գիտեք:

Իմաստի ընկալման փուլ

Նպատակը՝ պատմվածքի բովանդակության իմաստի ընկալում

Կիրառվում է «Ուղղորդված ընթերցանություն՝ կանգառներով» մեթոդը

Աշակերտներին նախապես ասվում է, որ հեքիաթը ընթերցելու ենք հատված առ հատված, հեքիաթը բաժանում ենք 3 հատվածի: Յուրաքանչյուր հատված ընթերցում են նախ լուռ ապա բարձրաձայն:

1-ին կանգառ

-Ի՞նչ կանեիք դուք, եթե լինեիք տատիկի փոխարեն:

Պատասխանում են կանխագուշակումների աղյուսակի հարցերին

Ի՞նչ պատահեց	Ի՞նչ է պատահելու	Ինչու՞ եք այդպես կարծում

1-ին հատվածի վերնագրում

2-րդ կանգառ

-Ի՞նչ եք մտածում կատարվածի մասին:

-Ի՞նչ բառերով կբնութագրեք աղվեսին:

-Ինչ՞ էր զգում աղվեսն այդ պահին:

2-րդ հատվածի վերնագրում

3-րդ կանգառ

-Եթե դուք լինեիք աղվեսի փոխարեն ի՞նչ կանեիք:

-Ուշադրություն դարձրե՛ք աղվեսի արարքներին:

-Ձեր կարծիքով աղվեսը ի՞նչ կպատմի ընկերներին:

3-րդ հատվածի վերնագրում

Կշռադատման փուլ

Գրատախտակին գրել հեքիաթի հենակետային բառերը և 2 ավելորդ բառ: Հանձնարարել՝ գտնել գրված բառերից ավելորդները՝ աղվեսը, պառավը, կով, կաթ, կռունկ, աղբյուր, աղջիկ, խաղալիք, կալվոր, հավ:

Տնային առաջադրանք՝ համառոտ վերարտադրել հեքիաթի բովանդակությունը: